

ԽՍՀՄ ԱՆՆԳԱՐԳՅՈՂԿՈՄԱՏ

ՅԵՐԵՎԱՆԻ ԾԽԱԽՈՏԻ ՖԵՐՄԵՆՏԱՑԻՈՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Ծ Խ Ա Խ Ո Տ Ի
Ջ Ե Տ Դ Ա Շ Տ Յ Ա Մ Շ Ա Կ ՈՒ Մ Ը

Պ Ե Տ Շ Ր Ա Տ

1 9 3 7

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

633.71: 631.55/56

8-60

ԱՅՈՒԿՎԱԾ Է 1961

Ծ Խ Ա Խ Ո Տ Ի Հ Ե Տ Դ Ա Շ Տ Յ Ա Մ Շ Ա Կ Ո Ւ Մ Ը

~~168~~

A 18559



ПОСЛЕУРОЖАЙНАЯ
ОБРАБОТКА
ТАБАКА

Госвиздат, Ереван, 1937 г.

Կազմեցին ագրոնոմներ՝ Ս. Գրիգորյան և Գ. Սալադյան
Պատ. խմբ.՝ Գ. Աղամալյան
Տեխ. խմբ.՝ Վ. Ալեքյան
Սրբազրիչ՝ Խ. Ալվազյան
Կոնտրոլ սրբազրիչ՝ Վ. Ավազյան
Դրավիտի լիազոր. № 1212
Հրատ. № 4273, պատվեր 722, տիրաժ 1000

Հանձնված է արտադրության 13 սեպտեմբ. 1937 թ.
Ստորագրված է տպագրության 25 սեպտեմբերի 1937 թ.

Պետհրատի 2-րդ տպարան, Յերևան, Նալբանդյան 11

ԱՌԱՋԱԲԱՆ

1. Հայաստանում զեղին ծխախոտի զարգացումն սկսվեց խորհրդայնացումից հետո՝ 1925 թվից: Այս կարևոր տեխնիկական կուլտուրայի զարգացման համար նոր ասպարեզ և բացվել ժողովրդական տնտեսութեան առաջին հնչաձայն պլանի կիրառման ընթացքում, վորն իր ուշադրավ տեղն և բռնում տեխնիկական մյուս կուլտուրաների շարքում:

2. Կոմունիստական կուսակցութեան XV համագումարում ժողովրդական տնտեսութեան առաջին հնգամյա պլանն ընդունելիս խոշոր միջոցառումներ ձեռնարկվեցին նաև գյուղատնտեսութեան զարգացման, ինչպես և տեխնիկական կուլտուրաների զարգացման համար, գլխավորապես կոլեկտիվացման, համայնացրած հողերի մշակման մեքենայացման խնդիրներում: 1930 թվին կուս. XVI համագումարն ուշադրութեանն ավելի սրեց գյուղատնտեսութեան զարգացման խնդիրներին, տեխնիկական մշակույթների ցանցի տարածութեանները լայնացնելու միջոցառումներին:

3. Ուսումնասիրութեամբ հաստատված և, վոր Հայաստանում ծխախոտի տարածութեանները լայնացման մեծ հնարավորութեաններ կան: Ծխախոտագործութեան 7 տարվա արդյունքներն ապացուցեցին բարձր բերքով ու վորակով ծխախոտ ստանալու՝ Հայաստանի հողային և կլիմայական պայմանները հաճախեց նպաստավոր լինելը:

4. Հայաստանում ծխախոտի կուլտուրայի զարգացման պատկերն ըստ տարիների հետևյալն է.

Տարեթիվ	Ծխախոտի տարածու- թյունը հեկտարներով	Մթերված ծխախոտի քանակը ցենտներով
1925	334	250,5
1926	530	3976
1927	481	2752
1928	541	2489
1929	515	3708
1930	766	5286
1931	2452	11419
1932	2754	19991
1933	2533	19751
1934	2500	19500
1935	2475	19145
1936	2500	24060

Ծանոթություն.— Հումուլթի քանակը ցույց է տրվում մթերածը. սույն թվերը մեջ ցույց չի տրված ստացված լրիվ բերքը, 1936 թ. բերքատուլթյունը կազմում է միջինը մեկ հեկտարից 9,6 ցենտներ՝ մթերվածը միայն:

5. Հայաստանում տարածված են ծխախոտի Սամսոն, Դիքդուլազ և Տրապիզոն բոտանիկական տեսակները: Իրենց վորակով առաջին տեղն է բռնում Ղափանի, Միկոյանի, Աշտարակի շրջանների, Կոտայքից՝ Բաշոյանում ծխախոտը, իսկ յերկրորդական տեղը՝ Իջևանի, Շամշադնի, Ալլահվերդու, Կոտայքի շրջաններից ստացված ծխախոտը: Ծխախոտագործութունը զարգանում է նաև Բասարգեչարի ու Ադիգյուեկովի շրջաններում:

6. Ծխախոտի հետզաշտյա մշակմանը նվիրված այս գրքույկի նպատակն է՝ ծխախոտ արտադրողներին (կուլտեսեսուլթյուն, կուլտեսեսական և մենտ. նտես) ծանոթացնել և կոնկրետ աջակցություն ցույց տալ ծխախոտի վորակի բարձրացման համար իրական պայքար մղելու գործում: Պետք է հիշատակել, վոր մինչև այժմ Հայաստանի Հողժողկոմատը կամ Սոյուզտարակուրյոն ծխախոտագործներին այս կարևոր կուլտուրայի մշակման պրոցեսների վերաբերյալ բավարար գրականությաժք չեն ապահովել: Ծխախոտ մշակելու նկատմամբ յեղած հատ ու կենտ գրականությունը չափազանց անբավարար և և լրացման կարիք ունի նաև մշակությ. ն մյուս պրոցեսների համար:

Ծխախոտը ճիշտ բտանդարտով մշակելուց է կախված վորա-

կի բարձրացումը: Կոլտնտեսությունների համար նյութական խոշոր բազա հանդիսացող այս կուլտուրայի մշակման գործին լուրջ ուշադրություն պետք է դարձնել:

7. Կադրերի պատրաստման գործը կոլտնտեսություններում լավ չի դրված: Ծխախոտագործներ պատրաստելու գործում մենք չափազանց հետ ենք մնում: Հողփողկոմատի ծխախոտաժնի հիմնական աշխատողներից զլխավորը ծխախոտը ճիշտ ստանդարտով մշակելու, վորակը բարձրացնելու խնդիրն է: Մասսայական կադրեր պատրաստելու հարցը Հողփողկոմատի և մեր ուշադրության կենտրոնը պետք է հանդիսանա: Կադրերից է կախված վորակով ծխախոտ մշակելը:

8. Ծխախոտի վորակը բարձրացնելու համար պետք է ստեղծել ծխախոտ չորացնելու պրոցեսի անհրաժեշտ հարմարություններ: Կոլտնտեսություններում չորանոցային շինարարության գործը շատ վատ է դրված, արևի չորանոցներով հնարավոր չէ լրիվ ապահովել ծխախոտի վողջ բերքը չորացնելու գործը. ժամանակն է, վոր շրջանների կոլտնտեսությունների մի մասում կառուցվեն նաև կրակի չորանոցներ, ինչպես և ստեղծվեն մշակելու, տեսակավորելու և հակավորելու հարմարություններ:

Մասնանշված խնդիրների իրականացումն ապահովելու յե ծխախոտի հետդաշտյա ճիշտ մշակման և վորակի բարձրացման գործը:

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

1937 թիվը ծխախոտի տեսակներ ստանալու գործում բեկման տարի պետք է հանդիսանա: Այս խոշոր խնդիրը կատարելու համար ծխախոտագործներից պահանջվում է լարված և ուշադիր աշխատանք՝ ծխախոտ մշակելու բոլոր պրոցեսներում, այլապես՝ վերև պրոցեսի սխալ և վոչ ժամանակին կատարելը թուլացնում կամ միանգամայն վոչնչացնում է մյուս պրոցեսի ազդեցությունը:

Ագրոտեխնիկական այդ պրոցեսները սերտորեն կապված են իրար հետ, վորոնցից դժարվորն են.

ա) ցրտահերկը, բ) սածիլելուց առաջ հողը խնամքով մշակելը, գ) հողը ֆիմիկական և որգանական նյութերով պարարտացնելը, դ) ժամանակին սածիլելը, ե) դաշտը հավասարաչափ սածիլելը, զ) սածիլները ժամանակին և կանոնավոր աճեցնելը, է) ճիշտ ցանքաշրջանառություն կատարելը, ը) ծխախոտի դաշտը մշակելը՝ ջրելը, քաղհանելը և այլն, թ) ծխախոտը ժամանակին հավաքելն ու նախնական մշակումը բերքահավաքից հետո:

Այս բոլոր պրոցեսները ժամանակին ու ճիշտ կատարելը հանդիսանում են այն հիմնական ձեռնարկումները, վոր խոշոր ազդեցություն են ունենում ծխախոտի քանակական և վորակական բարձր ցուցանիշներ ստանալու գործում: Ծխախոտի հարածուն մեր արդյունաբերությունը խորհրդային և կոլեկտիվ տրտեսություններից պահանջում է ծխախոտի քանակական ցուցանիշների հետ միասին նաև վորակական բարձր ցուցանիշներ: Այս կարևոր խնդիրը լրիվ կատարելու համար պետք է լուրջ ուշադրություն դարձնենք նաև ծխախոտի հետադաշտյա (բերքահավաքից հետո) մշակման գործին, վորով բարձրացրած կլինենք ծխախոտի ապրանքային տեսակները և էլ ավելի կամրապնդենք ծխախոտագործական կոլանտեսությունների նյութական բազան:

Պետք է ասել, վոր մեր ծխախոտագործները բավականաչափ ուշադրություն չեն դարձնում ծխախոտի հետադաշտյա մշակ-

ման գործին. հենց այս պատճառով ել հաճախ ե պատահում, վոր ծխախոտը դաշտում կանոնավոր մշակում և հավաքում են համաձայն ագրոտեխնիկայի պահանջներին, բայց վորովհետև նրա հետագա մշակումը (չորացնել, պահպանել և այլն) թերագնահատում են, այս պատճառով ել ծխախոտն իր վորակական արժեքը կորցնում ե:

Ծխախոտի բերքատվությունը բարձրացնելու գործում վերջին տարիներս մենք կարողացել ենք բավարար արդյունքների հասնել, բայց միևնույն ժամանակ ծխախոտի վորակական բարձր ցուցանիշներ ստանալու գործում չենք կարողացել բեկում մըտցրնել: Ահա հենց այս հանգամանքն առիթ ե ծառայել լույս ընծայելու հետդաշտյա մշակմանն ուղղված այս գրքույկը, վոր ոգնության պետք ե դա ծխախոտագործության գծով աշխատող կուտեստային բրիգադիւրներին, ագրոտեխնիկներին ու բոլոր ծխախոտագործ կուտեստականներին:

ԾԽԱԽՈՏԻ ՀԵՏԴԱՇՏՅԱ ՄՇԱԿՈՒՄԸ

Ծխախոտի հետդաշտյա մշակումն ամենակարևոր աշխատանքներից մեկն ե: Այսիսկ պատճառով, սկսած բերքահավաքից մինչև ծխախոտը մթերման կայան հանձնելը, ամենալուրջ ուշադրություն պետք ե դարձվի նրա մշակման բոլոր պրոցեսներին: Հետդաշտյա մշակումն սկսվում ե ծխախոտի բերքահավաքից հետո և ընդգրկում ե հետևյալ աշխատանքները. 1. ծխախոտ շարելը, 2. տամկացնելը, 3. չորացնելը, 4. հավանդավորելն ու պահելը, 5. տեսակավորելը, 6. փնջավորելն ու հակավորելը: Այս բոլոր աշխատանքները վճռական դեր են խաղում և ազդեցություն են ունենում ծխախոտի վորակի, հետևապես և նրա ապրանքային տեսակների վրա:

Ծխախոտի վորակի վրա այս աշխատանքների դրական կամ բացասական ազդեցությունը պայմանավորվում ե նրանով, վոր շրջապատող ողի խոնավության և ջերմության ազդեցության տակ ծխախոտի տերևի մեջ տեղի յին ունենում քիմիական բաղմազան պրոցեսներ, վորոնք փոխում են ծխախոտի տերևի թե արտաքին տեսքը (գույնը) և թե ներքին քիմիական կազմը: Ողի խոնավության չափից և ջերմության աստիճանից ե կախված ծխախոտի տերևի վորակի բարձրացումը կամ իջեցումը, վորովհետև կամ վերոհիշյալ յերկու ֆակտորների վորոշ

փոխհարաբերութեամբ տերևի մեջ կատարվող քիմիական պրոցեսները նրա վրա դրական ազդեցութեան են ունենում, լավացնելով գույնն ու վորակը, կամ յերբ հիշյալ ֆակտորներից յերկուսի կամ մեկի չափը շատ ավելի կամ պակաս լինելուց (խոսքը վերաբերում է գերխոնավութեան չափին կամ ջերմութեան առտիճանին) բացասական ազդեցութեան է թողնում ծխախոտի տերևի վրա, վորով և ընկնում է նրա վորակը:

Այս խնդիրները պարզաբանելու համար մենք համառոտ կերպով կբացատրենք այն բոլոր պրոցեսները, վոր հետադաշտյա մշակման ընթացքում կատարվում են ծխախոտի տերևների մեջ և կնշենք այն կանոնները, վորոնց ճիշտ կիրառումով պահպանած կլինենք ծխախոտի վերակական բարձր ցուցանիշները:

Ծխախոտ օտելը. — Ծխախոտի տերևները թիլին շարում են կամ տամկացնելուց առաջ, կամ հետո: Այս աշխատանքը բավականին լուրջ ու կարևոր աշխատանք է և վորակյալ բանավորներ է պահանջում: Ծարելու ժամանակ հատուկ ուշադրութեան պետք է դարձվի տերևների տեսակավորման վրա, յեթե այդ չի կատարվել դաշտում՝ քաղելու ժամանակ: Այն տերևները, վոր մեխանիկական վնասվածքներ, հիվանդութեաններ ունեն, գերհաս կամ թերհաս են, անպայման պետք է առանձնացվեն և առանձին-առանձին շարվեն: Պետք է տեսակավորել նաև մեծ ու փոքր տերևները, վորովհետև տամկացնելու և չորացնելու ժամանակ չեն կարող հավասարաչափ տամկանալ ու չորանալ: Վորպեսզի ծխախոտը հավասարաչափ չորանա, անհրաժեշտ է, բացի տեսակավորելուց, շարել նորմալ խոութեամբ: Յերբ ծխախոտը նոսր են շարում, արագ է չորանում, վորի հետևանքով տերևները կանաչ են մնում և անհրաժեշտ ու ցանկալի գույնը չեն ստանում: Չափազանց խիտ շարելու դեպքում հավասարաչափ չեն չորանում և մեծ մասամբ փչանում են: Այսինսկ պատճառով ծխախոտի տերևը շարելու ժամանակ պետք է առաջնորդվել հետևյալ կանոններով:

ա) տերևները խիտ կարելի չէ շարել միմիայն այն ժամանակ, յերբ ծխախոտը մանրատերև է, չոր ցիդանակներին է աճել ու հասունացել և յերբ քիչ թերհաս է,

բ) տերևները նոսր են շարվում միմիայն այն ժամանակ, յերբ ծխախոտը մեծատերև է, անձրևային խոնավ պայմաններում է աճել ու հասունացել և յերբ մինչև շարելը գերհասունացել կամ լավ տամկացել է:

Հենց այս պատճառով ել ծխախոտի ազրոտեխնիկական կա-
նոնների մեջ ասված ե, վոր տերէնների քաղի և շարելու ժամա-
նակ անհրաժեշտ ե մանրազնին տեսակավորում կատարել:

Շխախոտ սամկացնելը. — Շխախոտը քաղելուց հետո տերե-
ները վորոշ ժամանակ կենդանի վիճակում են լինում և ոգի խո-
նավության ու ջերմության ազդեցությունից իրենց քիմիական
կազմն ու գույնը փոխում են: Այս պրոցեսը ծխախոտագործները
տամկացում են անվանում: Այս կարևոր պրոցեսի ճիշտ կատա-
րումը դրական ազդեցություն ե թողնում ծխախոտի վորակի
վրա և, ընդհակառակը, սխալ կատարումը միանգամայն բացա-
սական ազդեցություն ե թողնում: Տերէները տամկացնելու ժա-
մանակաւընթացքը (քաղից հետո) պայմանավորվում ե ոգի խո-
նավության չափով, ջերմության աստիճանով (վորտեղ կատար-
վում ե տամկացնելու պրոցեսը), տերէների հասունության աս-
տիճանով և քաղով: Տամկացնելու համար հատկացվող շենքերը
քամիներից պաշտպանված պետք ե լինեն: Այն շենքերում, վոր-
տեղ ծխախոտ տամկացնելու պրոցեսն ե կատարվում և վորտեղ
ողը չոր ե լինում, պարզ ե, վոր տամկացնելու պրոցեսն այն-
տեղ արագ ե ընթանում—տերէի միջի ջուրը կարճ ժամանակում
գորրջիանում ե, հետևապես տերէը նորմալ ու լրիվ կերպով չի
տամկանում, վորի պատճառով ծխախոտը կանաչ ե մնում, վորը
և բացասաբար ե անդրադառնում ծխախոտի վորակի վրա: Յերբ
տամկացնելու համար հատկացված շենքի մեջ ոգի խոնավու-
թյունը բարձր ե լինում, տերէները բավականին ժամանակ կեն-
դանի յեն մնում և տամկացնելու պրոցեսն աստիճանաբար ու
նորմալ կերպով ե ընթանում, և այս հանգամանքը դրական ազ-
դեցություն ե թողնում ծխախոտի վորակական բարձր ցուցա-
նիշների վրա: Այսինկ պատճառով հատուկ ուշադրություն
պետք ե դարձնել տամկացնելու պրոցեսի վրա այն իրատուի-
վոր տերէի հյուսվածքը պահպանվի զգալի չափով ջրի պարու-
նակությամբ, պայքարելով հյուսվածքի արագ չորանալու դեմ:
Միաժամանակ պետք ե խուսափել նաև ավելորդ խոնավությու-
նից, մանավանդ յերբ տերէների հյուսվածքն սկսում ե անկեն-
դան դառնալ, վորովհետև այդ դեպքում ծխախոտը կարող ե
փչանալ: Տամկացնելու ժամանակ, վորպես անհրաժեշտ նախա-
պայման, թերահաս, գերահաս և նորմալ հասունացած տերէներն
իրարից պետք ե առանձնացվեն, քանի վոր գերահաս տերէներն
ավելի շուտ են տամկանում, քան հասունացածներն ու թերա-

հասները, և յիթե նրանք միասին շարած են տամկացվում, ապա մինչև հասուն և թերահաս տերևների տամկանալը գերահասները կփչանան: Այն տերևները, վոր հիվանդություններից (մոնթար, չեչոտություն և այլն) ֆրասվել են, իրենց միջի խոնավությունը շատ շուտ կորցնում են և լրիվ չափով չեն տամկանում: Այս պատճառով այդ տերևները պետք է առանձնացվեն և առանձին տամկացվեն: Ընդհանրապես տամկացնելու գործը ճիշտ կատարելու համար գերահաս, հասուն, թերահաս, հիվանդություններից ու ֆրասատուներից ֆրասված տերևներն իրարից պետք է առանձնացվեն և առանձին տամկացվեն: Տամկացնելը մի քանի ձևով է կատարվում, վորոնցից կարևոր են.

ա) գետնի վրա շարանով տամկացնելը, բ) շարելուց առաջ տամկացնելը և գ) շրջանակների վրա շարանով տամկացնելը:

Հայաստանի պայմաններում տամկացնում են վերոհիշյալ յերեք յեղանակով, վորից ամենատարածվածը գետնի վրա շարանով տամկացնելն է: Կուլտերով, առանց շարելու խորհուրդ է տրվում տամկացնել ավելի ցուրտ յեղանակներին: Տամկացնելու ժամանակաընթացքը կախված է տերևի քաղից, հասունության աստիճանից, ոգի խոնավության չափից, շերմության աստիճանից և այլն: Յուրա յեղանակներին տաք շնքերում պետք տամկացնել: Տամկացնելու պրոցեսի ժամանակաընթացքը, նայած պայմաններին, 1—3 օր է տևում: Տամկացնելու տեխնիկան հետևյալն է. դաշտից չորանոց փոխադրած՝ միաժամանակ քաղված տերևները 15—20 սմ հաստություն ունեցող շերտով դասավորում են չորանոցների մաքուր հատակին և սկսում են տամկացնելու պրոցեսը: Տամկացնելու համար տերևների դասավորությունը կատարվում է հետևյալ կերպ. գետնի կամ հատակի վրա փափուկ, չոր ծղոտ են փռում, 10—15 տերև ձխախոտ միասին վերցնում և կոթերը դեպի ներքև, ծայրերը դեպի վեր, թեք դասավորում են գետնին այնպես, վոր յերկրորդ փունջը ծածկում է առաջին կես մասը, յերրորդը՝ յերկրորդի, և այլն: Մեր պայմաններում ձխախոտը տամկացնելու համար կանաչ տերևները նախ շարում են և ապա ծայրերը դեպի ցած, կոթերը դեպի վեր, թեք դասավորում հատակին կամ գետնին: Այս ձևով տամկացնելու թերությունն այն է, վոր տերևների ծայրերը ձխախոտի ծանրության ազդեցության տակ ճիւղվում են և հաճախ սևանում. բացի դրանից, այս ձևով տամկացնելու ժամանակ ծայրերն ավելի շուտ են տամկանում, քան տերևի մյուս մասերը, վորի պատ-

ձառնով ամբողջ տերեր հավասարաչափ չի ղեղնում: Այսպես, անհավասար տամկացնելուց տերերներից շատերի ծայրերը դորշ գույն են ստանում, սևանում, իսկ արանքներում ել միանգամայն կանաչ տերերներ են մնում: Տամկացնելու ժամանակ տերերվներն առաջին ձևով դասավորելը՝ առանց շարելու, կոթերը ղեպի ներքև, ծայրերը ղեպի վեր՝ ամենից ընդունված ձևն է. այս դեպքում հեշտ է լինում շատ ղեղնածները փչացածները, ճխրվածները և այլն ջոկել և թելին շարել առանձին-առանձին: Տամկացնելու մյուս ձևը նույնպես նպատակահարմար է. այս ձևով տամկացնելու ժամանակ փչացող տերերների տողսը շատ քիչ է լինում: Այս ձևով տամկացնելու համար քաղից հետո տերերվները շարում են թելին, անմիջապես կախում շրջանակներին և 2—3 ժամ դնում արևի տակ, վոր տաքանա. հետո շրջանակները հավաքում են սրահը՝ իրար մոտ և խիտ դասավորում ու թողնում 2—4 որ: Այդ ժամանակամիջոցում ձխախտտի տերերները տամկանում են: Տամկացնելու պրոպան ավարտված է համարվում այն ժամանակ, յերը տերերը բավականին թառամում են և, միաժամանակ, կանաչ գույնը փոխում բաց դեղին:

Ծխախոտ չորացնելը.—Տամկացնելն ավարտելուց հետո ձխախտտի տերերները ղեռ ևս բավականաչափ ջուր են պարունակում (իրենց քաշի մոտ 75⁰/₁₀-ի չափ):

Յեթե ձխախտտը տամկացնելուց հետո անմիջապես չսկսեն չորացնել, մեջը յեղած խոնավությունից ձխախտտը կփչանա (կփտի):

Ծխախտտը չորացնում են արեգակի կամ կամ կրակի չորանոցներում:

Չորացնելու ընթացքը կախված է մի շարք պայմաններից և, առաջին հերթին՝ ավշալ ժամանակի յեղանակների պայմաններից ու չորացվող ձխախտտի դրությունից:

Ծխախտտը չորացրելիս պետք է առաջնորդվել հետևյալ հիմնակա կանոններով.

ա) ձխախտտը հավասարաչափ չորացնելու համար մի շրջանակի վրա պետք է կախել միևնույն քաղի, մեծության ու միևնույն աստիճանի տամկացված ձխախտտի շարաններ:

բ) վորպեսզի ձխախտտի ավելորդ խոնավությունն աստիճանաբար անցնի, վորով ստացվում է միատեսակ գույն ունեցող ձխախտտ, չորանոցները պաշտպանված պետք է լինեն քամիներից և միջանցիկ հոսանքներից, հակառակ դեպքում ձխախտտն արագ է չորանում ու գույնը կանաչավուն մնում.

գ) լավ ղեղին գույն ստացած ձխախտտը շուտ պետք է

չորացնել, այլապես լավ գույնը կփոխվի վատի: Այդպիսի ծխախոտի շրջանակները չորանոցում գիշերը խիտ չպետք և դասավորել:

դ) ծխախոտի շրջանակներն առավոտները չորանոցից դուրս պիտի հանել ցողն անցնելուց հետո, յերբ գետինը և ողբ տաքացել են:

ե) որվա շող ժամերին ծխախոտի շրջանակները պետք և քաշել չորանոցի ներսը, հակառակ դեպքում չորացած ծխախոտի գույնը կանաչավուն էլ կմնա:

զ) յեթե ծխախոտի տերևները (թիթեղը) չորացել ու ցանկացած գույնն են ստացել, իսկ նրանց հաստ ջղերը դեռ լավ չեն չորացել, այդ ծխախոտը չպիտի թողնել արևի տակ, հակառակ դեպքում, տրի ճառագայթներից ծխախոտի լավ գույնը վատի կփոխվի: Այդպիսի ծխախոտի ջղերը կարելի չե չորացնել չորանոցի ներսում կամ մի ուրիշ սավերոտ տեղ:

է) անձրևների և ուժեղ քամիների ժամանակ ծխախոտի շրջանակներն անմիջապես պետք և քաշել չորանոցի ներսը:

ը) գիշերները շրջանակները նույնպես պետք և քաշել չորանոցի ներսը, թե չե ծխախոտն անձրևից, ցրտից կամ ցողից կարող և մնասովի:

Ծխախոտը համարվում և չորացած, յերբ գլխավոր ջղերն ու կոթերը լավ չորացել են: Յեթե ծխախոտը լավ չի չորացել, հավանաբարում պահելու ժամանակ կարող և բորբոսնել և փչանալ:

Տ) ծխախոտի չորանոցը պետք և ապահովված լինի հակահրդեհային սարքավորումով:

Արևով չորացնելն ամենատարածված ձևն է, սակայն այս ձևով չորացնելը կերտելի չե այն շրջաններում, ուր աշնանը, ծխախոտի վերջին քաղերի տերևները չորացնելու ժամանակ անձրևներ չեն գալիս, ամպամած որբեր թիվը քիչ և լինում, և այլն, իսկ այն շրջաններում, ուր հակառակն է լինում, պարզ և վոր արևով չորացնելն արդյունավետ չի լինում, քանի վոր անձրևները, ցուրտը և խոնավությունը բացասաբար են ազդում ծխախոտ չորացնելու պրոցեսի վրա, վորից և ընկնում է ծխախոտի վորակը:

Մեր՝ Հայաստանի պայմաններում, մի շարք շրջանների վորոշ կողանտեսություններում (Բասարգեչարի, Կոտայքի, Ալլահվերդու, Ղափանի, Շամշազնի) անհրաժեշտ է կրակի չորանոցներ կառուցել, այլապես ծխախոտի 4-րդ և 5-րդ բարձրորակ

քաղն աշնանը միշտ ել փչանում ե: Ծխախոտը հաջող չորացնելու համար, լինի այդ կրակով թե արևով, ինչպես վերևում նշեցինք, տերևները շարելու ժամանակ խնամքով պետք և տեսակավորվեն և հիվանդ, գերահաս, թերահաս և այլ դեֆեկտներ ունեցող տերևներն առանձնացվեն և առանձին չորացվեն:

ՀԱՎԱՆԳ ՊԱՀԵԼԸ

Ծխախոտի տերևները չորացնելու պրոցեսը, ավարտելուց հետո շրջանակների վրայից շարձանները հավաքում և 3-4 շաբա-
նը միասին մեջտեղից ծալում—հավանք են դարձնում ու կախ տալիս համապատասխան տեղ, մինչև տեսակավորելը, փնջավոր-
ելն ու հակավորելը: Չնայած չորացրած տերևներն արդեն մե-
ռած վիճակում են, բայց և այնպես դեպի շրջապատող ողի ջեր-
մությունն ու խոնավությունը շատ զգայուն են և հեշտությամբ
են յենթարկվում նրանց դրահան կամ բացասական ազդեցու-
թյուններին: Ընդհանրապես չորացնելուց հետո տերևներն ունե-
նում են 8—10 % ջրային մաս, հետագայում, ողի խոնավու-
թյան դեպքում, այս տոկոսը բարձրանում և, վորովհետև չոր
ծխախոտը շրջապատի խոնավ ողից 18—20 % ջուր վերցնելու
հատկություն ունի, վորի պատճառով և դառնում է ճկուն, չի
փշրվում ու կորուստներ չի տալիս: Յեթե ողի խոնավության
տոկոսը շատ ցածր է (չորային), չորացված շարաններն արհես-
տական կամ բնական ճանապարհով պետք և խոնավացնել և հա-
վանգներ կազմել ու կախ տալ, այլպես՝ ծխախոտը կկորստավի
ու կորուստներ կտա: Բնական ճանապարհով խոնավացնելու յե-
ղանակն այն է, վոր չորացրած ծխախոտի շրջանակները գիշեր-
ները չորանոցից հանում են գծերի վրա, թողնելով այդպես
ամբողջ գիշերը: Խոնավացման այս ձևը կիրառելի յե
այն ժամանակ, յերբ վաղ առավոտները ցող չի լինում,
լավ պետք և իմանալ, վոր ցողը բացասաբար է ազդում
ծխախոտի վորակի վրա: Յեթե ծխախոտի շարանները
բոլորովին փակ շենքերում են պահվում, գիշերները դռ-
ները բաց են անում, վոր ծխախոտը խոնավանա: Ար-
հեստական ճանապարհով խոնավացնելն այն է, վոր ծխախոտի
շարաններին, հատուկ կարգավորված ապարատով, վորոշ ժամա-
նակ արհեստական գոլորշի յեն տալիս, վորից ծխախոտը խոնա-
վանում է և հավանգներ կազմելիս չի կորստավում: Այս ձևի

խոնավացնելուց պետք է խուսափել, թե չե գոլորշու կաթիլնե-
րը կընկնեն թերթերի վրա: Ինչպես վերևում հիշեցինք, խոնա-
վացրած շարանները շրջանակներից հանում և 3—4-ն իրար
միացնելով՝ խիտ-խիտ կախ են տալիս համապատասխան շենքում:
Ծխախոտի վորակական բարձր ցուցանիշներ ստանալու խնդրում
մեծ դեր է խողում այն պահելը, վոր գլխավորապես կախված է
նրանից, թե ի՞նչ շենքում է պահվում ծխախոտը:

Մեր պայմաններում ծխախոտի հավանգները չորանոցնե-
րում են պահվում, այն էլ այնպիսի չորանոցներում, վոր մի քանի
կողմից բաց են և յեղանակի աննպաստ ազդեցությունից պաշտ-
պանված չեն: Այսպիսի չպաշտպանված շենքերում, պարզ
է, վոր ողի բարեխառնությունը փոխվում է (չոր լեղանա-
կին հետևում են անձրևային յեղանակներ և այլն), վորից
և կախված է ծխախոտի վիճակը: Ծխախոտը հաջորդաբար
չորանում և խոնավանում է: Յեղանակի փոփոխվող պայմաննե-
րը (Չերմություն և խոնավություն) պարզ է, վոր անդրադառ-
նում են ծխախոտի վրա, վորի մեջ տեղի յեն ունենում քիմիա-
կան կազմի փոփոխություններ, վորից փոխվում է ծխախոտի
արտաքին տեսքը, դույնը և այլն: Այս փոփոխությունների աս-
տիճանը կախված է շրջապատի ողի Չերմությունից և խոնավու-
թյունից: Ծխախոտի հավանգների մեջ բարենպաստ պայմաննե-
րում կատարվող այդ փոփոխությունները նման են ճիշտ այն
փոփոխություններին, վոր կատարվում են ծխախոտի խմորման՝
Ֆերմենտացիայի ժամանակ: Հավանգներ պահելու ժամանակ
ծխախոտի մեջ տեղի յե ունենում ուսլայի ածխաջրատիների քայ-
քայում, սպիտակուցային նյութերը քչանում են, ծխախոտի
ջուր քաշելու ընդունակությունը ցածրանում և տերևների կա-
նաչավուն գույնն անցնում է: Միաժամանակ պետք է մատնա-
նշենք, վոր քիմիական կազմի թված փոփոխությունները, վորոնք
տեղի յեն ունենում ծխախոտի տերևի մեջ և բարձրացնում են
նրավորակը, լինում են միայն այն պայմաններում, յերբ շրջապա-
տող ողի խոնավությունը լինում է 60—75% -ի սահմաններում,
իսկ Չերմությունը՝ Ց 15—20°: Այդ ժամանակ ծխախոտի տերևի
խոնավությունը հասնում է 17—20% -ի: Յեթե շրջապատող ողի
խոնավությունը 75% -ից բարձր է լինում, ծխախոտը բորբոս-
նում և և փչանում, իսկ յեթե խոնավությունը 60% -ից ցածր
է, ծխախոտը չոր է լինում և ևկորուստներ է տալիս (փշրվում է),
յերբ անգամ մի փոքր կպչում են նրան: Բացի դրանից, պետք

և նշել, վոր այսպիսի պայմաններում գույնի կամ վորակի լավացում չի կարող տեղի ունենալ:

Բացի խոնավությունից, տերևի քիմիական կազմի փոփոխման վրա ազդում է նաև շրջապատող ողի ջերմությունը, որին նակ՝ բարձր ջերմաստիճանի տակ քիմիական կազմի փոփոխությունները շատ արագ են կատարվում, իսկ 5°-ից ցածր ջերմության ժամանակ այդ փոփոխությունները դանդաղ են ընթանում: Չնայած, վոր հավանգ պահելու ժամանակ բավարար խոնավությունից ֆերմենտացիոն պրոցեսներ են տեղի ունենում և լավացնում նրա վորակը, այնուամենայնիվ խորհուրդ է տրվում, վոր պահելու ժամանակ հավանգները մի քիչ չոր լինեն, քան թե խոնավ, վոր չբորբոսեն, վորը, ինչպես հայտնի յե, մեծ վնասների պատճառ է դառնում: Վնասն այն է, վոր բորբոս առաջացնող որգանիզմներն իրենց զարգացման համար գործ են անում տերևի մեջ յեղած չոր նյութերը, մասնավորապես նրա ամենաթանգարժեք մասը՝ ամխաջրատները, վորի հետևանքը լինում է այն, վոր ձխախտի վորակը բոլորովին բնկնում է: Բացի դրանից, այդ որգանիզմները տերևի չոր նյութերը գործադրելով, ձխախտի քաշն ել են ընդնում հողուտ այդ որգանիզմների զարգացմանը: Այսպիսով, նորմալ պայմաններում պահվող ձխախտի թե վորակը և թե քանակը միշտ բարձր է լինում: Այս բոլորն ապացուցում են, վոր ձխախտի հավանգները պետք է պահվեն այնպիսի շենքերում, վորտեղ ողի հարաբերական խոնավությունը 60—75% -ի սահմաններում լինի, իսկ ջերմությունը՝ Ցելսիուսի 15—20°, անկախ այն բանից, թե նրանք չորանոցում են պահվում, թե հատուկ պատրաստված շենքում: Պահվող ձխախտի հավանգները ժամանակ-առժամանակ պետք է ստուգվեն, և յեթե նրանց մեջ խոնավ տերևներ (գըլխավորապես կոթեր) կան, պետք է առանձնացվեն, վոր չբորբոսեն:

Մխախտի հավանգները պետք է պահվեն ծածկված և չոր շենքերում, վորտեղ վնասակար և ազդեցիկ հոտ (գոմի հոտ և այլն) չկա: Այս շենքերն անպայման պետք է դուռ ու լուսամուտ ունենան, վոր կարիք յեղած դեպքում կարելի լինի շենքն ողափոխել: Այսպիսի շենքերում ձխախտն արտաքին ողի (խոնավ և չոր յեղանակների) ազդեցություններից զերծ է լինում: Միանգամայն անթույլատրելի յե համարվում հավանգներ պահելը բաց շենքերում, չորանոցներում և այլուր, վորովհետև

այս պայմաններում ողի չափազանց խոնավ կամ չոր լինելը բացասական ազդեցութիւնն է ունենում ծխախոտի վրա, գցելով նրա վորակը: Ծխախոտը պաշտպանված շենքերում պահելով և ջերմաչափերի ու խոնավաչափերի ոգնութեամբ ներսի ողբ մերթ-ընդ-մերթ կանոնավորելով՝ նրա վորակն զգալի չափով բարձրանում է:

Մենք խոսեցինք այն մասին, թե ծխախոտը ծածկած շենքերում պետք է պահվի, վոր արտաքին ողի ազդեցութիւններին չենթարկվի: Միաժամանակ պետք է ավելացնենք, վոր այն շենքերը, վորոնց տանիքը թիթեղածածկ է, առաստաղը տախտակից է, ծխախոտը չափից դուրս չորանում է, կամ յեթե տանիքը կղմինդրից է լինում և առանց առաստաղի, խոնավ յեղանակներին կղմինդրից խոնավութիւնն անցնում է ծխախոտին ու վնասում այն: Այսիսկ պատճառով, ծխախոտը պետք է պահվի այնպիսի շենքերում, վորոնք տախտակած հատակ և առաստաղ ունեն: Այն շենքերը, վոր առաստաղ չունեն, պետք է ծածկել ետերնիտով, յեղեգնով կամ հացահատիկի ծղոտով, վոր կարելի լինի ծխախոտը նորմալ վիճակում պահել:

ԾԽԱԽՈՏ ՏԵՍԱԿԱՎՈՐԵԼԸ

Մինչ ծխախոտի տեսակավորումն սկսելը, յուրաքանչյուր տնտեսութիւն պետք է իրեն ապահովի ծխախոտի խոնավանոցներով: Հավանգներին ջուր ցանելով կամ գլշերները հավանգները դուրս բերելով ծխախոտ խոնավացնել չի թույլատրվում: Այսիսկ պատճառով յուրաքանչյուր կոլտնտեսութիւնն խոնավանոցի շենք պետք է պատրաստի հետեյալ կերպ. 2 մետր խորութեամբ փոս են փորում, վրայից գերաններ են դրում ու հողով ծածկում, բացի այն անցքից, վոր պետք է թողնել դուրս գալու և ներս մտնելու համար:

Անձրևաջրերից խուսափելու համար գերանների վրա ծղոտ կամ յեղեգ պետք է փռել, վոր ջուրը չանցնի խոնավանոց: Ամեն 10 աչք չորանոցի համար պետք է ունենալ առնվազն 5—6 մետր յերկարութիւն և 4 մետր լայնութիւն ունեցող խոնավանոց. այս հասարակ ձևի խոնավանոցները հեշտութեամբ կարելի է կառուցել: Խոնավացած համարվում է այն ծխախոտը, յերբ նրա գլխավոր ջիղը քիչ փափկում և մշակելիս չի կոտրատվում, Չափազանց խոնավացնելու դեպքում ծխախոտը կփչանա: Խոնա-

վացնելուց հետո, յերբ ծխախոտը փափկում և և կոտրատվելու վտանգ չկա, սկսում են տեսակազորման պրոցեսը:

Ծխախոտ տեսակազորելու նպատակն այն է, վոր ծխախոտի բոլոր տերևներն առանձնացվին միանման խմբերի ըստ նրանց քաղի, գույնի, թանձրության, մեխանիկական և հիվանդութուններից ու ֆլասատուներից առջացած ֆլասավածքների չափի և այլն: Նայած թե ծխախոտի տերևները վոր խմբին են դասվում, ըստայնմ ել լինում են ցածր կամ բարձր վ-բակի, վորի շնորհիվ արդյունաբերությանը հանձնվում են տարբեր դներով: Հինց այս պատճառով ել ծխախոտ ընդունելու և հանձնելու համար պետությունը ծխախոտի ապրանքային տեսակներ և սահմանել, վոր, նայած իրենց հատկանիշներին, բաժանվում են 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ տեսակների: Ծխախոտը տեսակազորում են վոչ թե շարուն ձևով, այլ այն հատկանիշների հիման վրա, վորոնք հնարավորություն են տալիս վորոշելու ծխախոտի այս կամ այն ապրանքային տեսակին պատկանելը: Գլխավոր հատկանիշները, վորոնց վրա հիմնված և տեսակազորումը, հետևվյալն են. քաղը, հասունությունը, գույնը, մեխանիկական ֆլասավածքները, հիվանդություններից և ֆլասատուներից ֆլասաված լինելը, տերևների թանձրությունը և հողից կամ ազդից կեղտոտված լինելը: Վորպեսզի վերոհիշյալ հատկանիշները դերը պարզ լինի, կանգ առնենք նրանց վրա առանձին-առանձին:

1. Կազր. — Ծխախոտի ցողունի ներքևի գոտու քաղերն (դիբ., խաշլամա) ավելի ցածր են գնահատվում, քան վերևի քաղերը: Վերևի քաղերի տերևները մեծ քանակությամբ թանգարժեք, հաճելի ու անուշահոտ նյութեր են պարունակում, վորոնք ծխախոտին տալիս են ավելի լավ արոմատ՝ հոտ, թանձրություն և այլն, քան ներքևի քաղերը: Առհասարակ յուրաքանչյուր քաղ, սկսած ծխախոտի ցողունի ներքևի գոտուց մինչև վերևի գոտին, տարբեր վորակ և արժեք ունի: Սկսած ներքևից՝ առաջին գոտու քաղն ավելի ցած վորակ և արժեք ունի, քան յերկրորդ գոտու քաղը և այդպես շարունակ, մինչև վերջին գոտու քաղը: Սակայն ծխախոտը թե դաշտում և թե չորացնելու ու պահելու ժամանակ վատ մշակելուց վերևի քաղերի վորակն ընկնում է, քանի վոր նրանք ավելի ցածր ապրանքային տեսակների շարքն են դասվում:

2. Հասունությունը. Տարբեր աստիճանի հասունություն ունեցող տերևները (գերահաս, թերահաս և նորմալ հասունացած) իրենց գլխավոր նյութերի կազմությամբ միանման վորակ չունեն:

նեն: Թերահաս տերևների մեջ մեծ չափով ջուր և լինում և ավելի քիչ՝ չոր նյութեր, քան նորմալ հասունացած տերևների մեջ, վորի պատճառով նրանք դասվում են ավելի ցածր ապրանքային տեսակների շարքը: Թերահաս ծխախոտի տերևները կուպիտ են լինում, միահավասար դուլն չեն ունենում և մուգ-կանաչ գույնի յեն լինում: Գերահաս տերևները բոլորովին դատարկ են լինում, վորովհետև նրանք իրենց սննդաբար նյութերի պաշարը դեռ դաշտում յեղած ժամանակ են կորցրել: Այս տերևները կոչվում են «աշլագ» և նույնպես դասվում են ավելի ցածր ապրանքային տեսակի շարքը, քանի վոր Թանձրությունից ու համից դուրկ են և լավ չեն ծխվում:

Նորմալ հասունացած և իր ժամանակին հավաքված ու լավ չորացրած տերևներն ունենում են մաքուր ու լավ դուլն, նորմալ Թանձրություն, արոմատ և տեսակավորման ժամանակ դասվում են բարձր ապրանքային տեսակների շարքը:

Յ. Գուլեր.— Ծխախոտի ապրանքային տեսակները վորոշելու համար հիմնական հատկանիշներից մեկը ծխախոտի դուլնն և Հայաստանի ծխախոտագործական շրջանների համար լավ գուլն և համարվում մաքուր դեղինը, կարմիրը, նարնջագույնը: Յերբ լավ չմշակելու և պահելու պատճառով այս գուլները մուգ յերանգներ են ունենում, ապրանքային ցածր տեսակների շարքն են դասվում:

Զ. Թանձրություն.— Ծխախոտի բարձրորակ հուժուժ ստանալու գործում մեծ դեր և խաղում նաև Թանձրությունը, վոր առաջ և գալիս լավ մշակելուց և պահելուց (բջատելը, ծաղկատելը և այլն): Տիրեք վորքան Թանձր և լինում, վորակն այնքան բարձր և լինում և ավելի բարձր ապրանքային տեսակների շարքըն և դասվում, սակայն չափավորաց Թանձր տերևները կուպիտ, գորշ են լինում և վորակի ցածրացում են տալիս: Ծխախոտի ցողունի ներքևի գոտու քաղերը, որինակ՝ դիրսարը և խաղաման Թանձր չեն լինում և այդ պատճառով նրանք ցածր ապրանքային տեսակների շարքն են դասվում: Յողունի վերին գոտու քաղերը, յեթև բավարար են մշակված լինում, շնորհիվ իրենց Թանձրության, ապրանքային բարձր տեսակների շարքն են դասվում:

Է. Վնասվածներ.— Հիվանդություններից, ֆլասստոուններից և մեխանիկական ֆլասսվածքներից առաջացած՝ տերևի վնասվածքները տարբեր չափերով իջեցնում են նրա վորակը և այդպիսի

տերէնները դասվում են ավելի ցածր ապրանքային տեսակների շարքը: Վնասվածքների չափը վորքան մ'ծ է լինում, նրանք այնքան ավելի ցածր տեսակների շարքն են դասվում:

Ե. Ծխախոտի տերէնները՝ հողից և ավազից կեղտոտված լինելն այն հատկանիշներից մեկն է, վորի պատճառով այդ տերէնները դասվում են միանգամայն ցածր տեսակի շարքը: Յեթն կեղտոտութեան չափը 3/6-ից բարձր է լինում, այդ ծըխախոտը չի ընդունվում: Այսինի պատճառով հողով և ավազով կեղտոտված տերէնները շարեւեց հետո հոսող ջրով պետք է լվացվեն:

Ահա այն բոլոր հատկանիշները, վոր հիմք են ծառայում ծխախոտի տեսակավորմանը, և վորոնցով մեր կոտնտեսութունները, ագրոտեխնիկներն ու ագրոտոմները պետք է խիստ ղեկավարվեն ծխախոտի տեսակավորման ժամանակ: Ծխախոտի այն բուսաբանական տեսակները, վոր շարաններով պետք է հակավորվեն, տեսակավորվում են շարանների մեջ, ջոկելով տվյալ շարանի հիմնական տերէններից բոլոր այն վատառողջ տերէնները, վորոնք չեն համապատասխանում շարանի մեջ յեղած գերակշռող տեսակին, շարանի մեջ մնացած տերէնները խտացնում են և հակավորում: Տեսակավորման հետևանքով շարաններից առանձնացված տերէնները հավաքվում են և անմիջապես հակավորվում ըստ ապրանքային տեսակների, այլապես վտարի տակ կարող են փչանալ:

Փնջերով հակավորվող ծխախոտի տեսակավորման ձևը տարբերվում է վորոհիշյալ ձևից նրանով, վոր շարանի մեջ յեղած բոլոր տերէնները (40—50 հատ միանգամից) թելից քաշվում, տեսակավորվում և առանձին կույտերով են դարսվում, վորից հետո սկսվում է փնջավորումը: Փնջավորումը կատարվում է հետևյալ կերպ. ծխախոտի այս կամ այն ապրանքային տեսակին պատկանող տերէնները հարթում են և 18—25 տերե դարսում միմյանց վրա այնպես, վոր կոթերը ցրված չլինեն և ուղիղ իրար վրա նստեն, ներկայացնելով մի ամբողջութուն, վորից հետո թելով կապում են: «Ստոս» ձևով մշակելիս նույնն են անում, ինչպես փնջավորելիս, միայն այն տարբերութեամբ, վոր «ստոս» ձևով մշակելու ժամանակ փնջերը չեն կապվում:

Ծխախոտի տեսակավորումը հաջող ընթանալու համար յուրաքանչյուր կոտնտեսութուն պետք է ունենա տեսակավորողներ, հակավորողներ և փնջավորողներ՝ առանձին-առանձին: Յուրաքանչյուր 3—4 հողի փնջավորողին անհրաժեշտ է մեկ տեսա-

կավորող, վորի պարտականութունն այն է, վոր ծխախոտի տե-
րեներն առանձնացնում է ըստ առանձին ապրանքային տե-
սակների և տալիս փնջավորողներին՝ փնջավորելու համար:

Բացի այդ, յուրաքանչյուր կողանտեսութուն 2—3 խմբա-
կի համար պետք է ունենա մեկական տեսակավորող, վորը պետք
է հսկի մնացած տեսակավորողների վրա և ընդունի նրանց
կատարած աշխատանքները: Փնջավորված ծխախոտն ըստ ապ-
րանքային տեսակների դարձվում է կապոցներով (պաչկանե-
րով) 40—60 ում հաստությամբ և փնջերը թեթե մամլելու համար
վրան տախտակ ու ծանրութուն դնում և այդպես թողնում են
մոտ 10—12 որ՝ անհրաժեշտ դույնն ստանալու համար, վորից
հետո սկսում են հակավորել:

ԾԽԱԽՈՏ ՀՊԱՎՈՐԵԼԸ

Ծխախոտ հակավորելու ժամանակ անհրաժեշտ է կիրառել
հետևյալ հիմնական պայմանները. ա) ծխախոտի տերեխն այն-
պիսի ձև տալ, վոր նրա վորակական հատկութունները պահպա-
նելու համար հարմար լինի, բ) ծխախոտ բարձելու, փոխադրե-
լու և բեռնաթափելու համար հարմարութուն ստեղծվի, գ) տե-
րեի իսկական դույնի ստացումն ապահովվի, դ) Փրման սցիայի
(խմորման) պրոցեսը ճիշտ և նորմալ կարգով ընթանա, ե) ծխա-
խոտը բորբոսնելուց, փտելուց և այլ փչացումներից պաշտպան-
վի, զ) կորուսանները կրճատվեն և նվազագույն չափերի հասցվեն:
Այս խնդիրներն ապահովում են հակավորման այն կարգն ու
ձևը, վոր ներկայիս, համաձայն ստանդարտի պահանջի, կիրա-
ռում են ծխախոտագործության մեջ:

Հայտնի չի, վոր չֆերմենտացված ծխախոտն անհամեմատ
ավելի շատ խոնավութուն է պարունակում, քան ֆերմենտաց-
ված ծխախոտը և այդ բարձր խոնավության պատճառով, սխալ
հակավորման և պահպանման դեպքում վոչ ֆերմենտացված
ծխախոտի փչացումները խոշոր են լինում: Ուստի և հակավորման
ժամանակ ծխախոտն այնպես պետք է դարսել, վոր հակն ամբող-
ջական համասեռ մասսա լինի և բոլոր մասերից ոչ կարողա-
նա անցնել, վոր անհրաժեշտ է թե հսկի մեջ հավասարաչափ և

նորմալ խոնավություն պահելու և թե հետագա ֆերմենտացիայի համար:

Ֆերմենտացիայի ժամանակ ծխախոտի տերևի մեջ աջնալիսի պրոցեսներ են կատարվում, վոր կապված են ավելորդ խոնավությունը չեզոքացնելու, այսինքն, ջուրն այն նյութերից անջատելու հետ, վորոնք մտնում են ծխախոտի տերևի կազմի մեջ: Ֆերմենտացիայի ընթացքում անհրաժեշտ է այդ ջուրը հակի միջից հեռացնել, և վորպեսզի այս բանը հեշտությամբ կատարվի, հակավորելու ժամանակ հակն ամուր չպետք է սեղմել, բացի այդ, մի անգամ ևս պետք է հիշատակել, վոր բարձր խոնավություն ունեցող ծխախոտը չպետք է հակավորել:

Չֆե մենտացված վիճակում և ֆերմենտացիայի պրոցեսում ծխախոտը փչանալու ամենազլխավոր պատճառն այն է, վոր հակավորումը կատարվում է անբարեխիղճ կերպով և տերևները բարձր խոնավություն ունենալու ժամանակ:

Ծխախոտի, առանձնապես վերևի քաղերի տերևների վորակը բարձրացնելու համար կարևոր նշանակություն ունի կուլտերով կամ լավաներով պահելու յեղանակը: Այս ձևը, վորակը բարձրացնելու տեսակետից, հանդիսանում է պայքարի միջոցառումներից մեկը, վոր անհրաժեշտ է վործադրել աշխատանքի պրոցեսում:

Մեր մի քանի ծխախոտագործական շրջաններում (Իջևան, Շամշադին, Ասիան և այլն) աշնանը տեղացող անձրևները նպաստում են չորացրած ծխախոտի տերևի մեջ ավելորդ խոնավություն կուտակվելուն, վորը պատճառ է դառնում հետագայում ծխախոտի փչանալուն: Այս փչացումներից խուսափելու համար, կուլտեստեսությունները հատուկ շնքեր պետք է ունենան՝ չորացած ծխախոտը մինչև տեսակավորելը, հակավորելն ու մթերման կայանին հանձնելը պահելու համար: Ծխախոտի յուրաքանչյուր հակ պետք է բաղկացած լինի միանման բուսաբանական և ապրանքային տեսակից, միատեսակ քաղից, միատեսակ չափ ունեցող տերևներից, ունենա միատեսակ չորացնելու յեղանակ և այլն:

Հակավորումը կատարվում է առանձին, տախտակից պատրաստած, հատակ և ծածկոց չունեցող արկղի մեջ: Այդ արկղի կողերը շարժական են և կանոնավորում են հակի լայնությունը, բայտ հակավորվող տերևների չափերի: Տրապիզոն ծխախոտի հակն անհամեմատ մեծ է լինում, քան «Մամսոն» տեսակի ծխախոտինը, վորովհետև նրա տերևներն ավելի մեծ են, քան «Մամսոն» տեսակինը:

Սովորաբար հակի յերկարությունը 80 սմ է լինում, իսկ բարձրությունը՝ 53 սմ: Հակի լայնության չափը կախված է հակավորվող տերևների յերկարությունից: Հակավորման փայտերը հակի ծայրից պիտի դուրս մնան մոտ 4 սմ:

Նախքան հակավորելն արկղը դրվում է հակավորման յերեք փայտի վրա, վորոնք շագագատով նախապես կապվում են իրար: Այնուհետև սկսում են ծխախոտի շարանները կամ փնջերը, նախած մշակման ձևին, յերկու շարք դարսել արկղի մեջ կոթերը դեպի արկղի պատերը:

Փնջերը շարքերում այնպես պետք է դարսել, վոր մի շարքի տերևների ծայրերը ծածկեն մյուս (հակառակ) շարքի տերևների վոչ պակաս քան մեկ յերրորդ մասը, բայց կիսից վոչ ավելի: Հակի ներսի մասը սեղմվելուց դերժ պահելու և հակին ավելի կանոնավոր տեսք տալու համար, հակի նեղ կողերի կողմից առանձին փնջեր են դարսվում, վորոնց տերևները մեջտեղի ջղի ուղղությամբ «ծալված» են: Այսպես ծալված փնջերը դրվում են կոթերն ու ծալված կողերը դեպի դուրս: Հակի ներքևի և վերևի մասերը դանազան ֆրասվածքներից ազահովելու համար, փնջերն իրար վրա դարսում են, այսպես ասած՝ իրար «հյուսելով»: «Հյուսած փնջերը սովորական փնջեր են, վոր այնպես չեն դարսվում, ինչպես հակի միջին մասում, այլ ավելի նոսր և հյուսվածքի պես իրար մեջ անցկացնելով: Յերը արկղի մեջ ստանդարտ թվով պահանջվող փնջերի շարքերն իրար վրա դարսվում են, արկղն զգուշությամբ հանում և պատրաստի հակի վրայից նորից յերեք փայտ են դնում այնպես, ինչպես հակի ներքևի կողմից և շագագատով հաջորդական կարգով կապում ներքևի փայտի հետ: Այս բոլորից հետո հակը պատրաստ է և կարելի յե հանձնել մթերման կայան:

Շարաններով ծխախոտ հակավորելը նույնպես կատարվում է արկղների մեջ, ըստվորում տեսակավորված շարանները յերկուական շարքով դարսվում են արկղի մեջ՝ կոթերը դեպի դուրս, առանց «ծալվածքների» և «հյուսվածքների»: Այդպիսով, շարաններով մշակած ծխախոտը հակերի մեջ ներքևից մինչև վերև միաձև է դարսվում:

ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՆՉՊԵՍ ԳՍՀՊԱՆԵԼ
ՖԵՐՄԵՆՏԱՅԻԱՅԻ ՉԵՆԹԱՐԿՎԱԾ ԾԽԱՍՈՏԸ

Ֆերմենտացիայի չենթարկված ծխախոտը հակերի մեջ պահելն ավելի բարդ և պատասխանատու աշխատանք է, քան հավանգներով պահելը:

Այն պահեստում, վորտեղ ծխախոտի հակեր են պահվում, ողի խոնավությունն ու ջերմությունը համապատասխան աստիճանի (Ց 20 - 30) հասնելու ժամանակ հակի մեջ ֆերմենտացիայի պրոցես (խմորում) է սկսվում: Այդ ժամանակ ծխախոտի այդ հակերը շատ լավ պետք է խնամել, հակառակ դեպքում՝ մեջը բորբոս կառաջանա և հակերը կփչանան: Այս բանից խուսափելու նպատակով, պատրաստված հակերն առանց ձգձգելու պետք է հանձնել ծխախոտի ընդունման կայան, վորտեղ խնամքի և հսկողության դործն ապահովված է և լավ հիմքերի վրա յե դրված:

Սակայն, յերբեմն աննպաստ յեղանակների, փոխադրական միջոցներ չլինելու, կայանի հեռավորության և այլ պատճառներով՝ հակավորված ծխախոտը հնարավոր չի լինում ժամանակին հանձնել և ստիպված են լինում յերկար ժամանակ պահել կոլտնտեսություններում: Այսպիսի դեպքերում ծխախոտի հակերը մինչև մթերակայան հանձնելը փչանալուց զերծ պահելու համար անհրաժեշտ է կիրառել հետևյալ կանոնները.

ա) «յն շինքերը, վորտեղ ծխախոտի հակեր են պահվում, բավարար չափով մեկուսացված պետք է լինեն դրսի ողի ներգործությունից, ճեղքեր չունենան և ուսնան կանոնավոր ծածկվող լուսամուտներ ու դռներ, հատակը և առաստաղը տախտակած լինեն.

բ) յեթե հատակը քարից կամ հողից է, չի թույլատրվում ծխախոտի հակերը դարսել ուղղակի հատակին. հատակի վրա չոր տախտակներ կամ վորևե չոր առարկա պետք է փռել և հակերը դարսել դրանց վրա.

գ) նախքան հակերը պահեստում դարսելը, ամբողջ պահեստը լավ պետք է ստուգվի, և յեթե պարզվի, վոր պահեստի վորոշ տեղեր խոնավ են, անպատճառ պետք է չորացնել չհանգած կրով: Չի թույլատրվում հակերը խոնավ տեղ դնել, նույնպես արգելվում է չֆերմենտացված ծխախոտը վանդակի ձևով դնել, վո-

րովհետև ծխախոտը դրանից վորոշ չափով սեղմվում է, մի բան, վոր ցանկալի չէ.

դ) ծխախոտ պահելու ամբողջ ժամանակաընթացքում պահեստի լուսամուտներն ամուր ծածկված պետք է լինեն: Յնթե լուսամուտները տախտակե դռներ ունեն, ապա արեղակի կողմի պատուհանների դռները նույնպես պետք է պինդ ծածկել, վոր ճառագայթները չթափանցեն, ներսի ողջ չտաքացնեն և ժամանակից առաջ ֆերմենտացիա առաջ չբերեն.

ե) պահեստն առավոտյան ժամերին՝ շաղն անցնելուց հետո, ժամանակ-առժամանակ պետք է ողափոխել, վորի համար լուսամուտները և դռները յերկու ժամով պետք է բաց թողնել: Այս ողափոխութունը պետք է կատարել չոր յիզանակներին: Խոնավ յիզանակներին դռներն ու լուսամուտները յերբեք չպիտի բացել, հակառակ դեպքում ծխախոտն ավելորդ խոնավութուն կստանա, վորն առաջ կբերի խմորման պրոցես կամ բորբոս:

Հակերն ամենանպատակահարմար կերպով դարսելու ձևը շտաբելներով դարսելն է՝ կանգնած փայտերի վրա կամ յետյակներով այսպես են դարսում. Չ հակ ծխախոտ կանգնեցնում են փայտերի ծայրերի վրա, իսկ յերրորդը՝ պառկած այնպես են դնում այդ Ձ-ի վրա, վոր վերևի հակի փայտերը նայեն ներքևի հակի փայտերի սուր վերջավորութուններին: Հակերը պարբերաբար պետք է նայվեն: Մթերման կայանների պահեստները, վոր իրենց բնույթով չֆերմենտացված ծխախոտը յերկարատև պահելու համար են, ունենում են ոժանդակ շինքեր, այսպես կոչված՝ «հիվանդանոցներ», ավելորդ խոնավութուն ունեցող հակերը չորացնելու և վերապատրաստելու համար: Այդ շինքերը պետք է ունենան ողափոխության լավ հարմարություններ (վնտիլյացիա), իսկ շինքի ջերմությունն ու խոնավությունն ստուգելու համար ունենում են ջերմաչափեր և խոնավաչափեր:

Ինչպես նախորդ գլուխներում ասվեց, ավելորդ խոնավության առկայությունը բորբոս առաջանելու պայմաններ է ստեղծում, ուստի դրա դեմ պայքարելու համար ծխախոտ պահելու ժամանակ պահեստում նորմալ ջերմություն ու խոնավություն պետք է ունենար:

Ծխախոտ պահելու համար խոնավության չափը պետք է լինի 60—70 տոկոս, իսկ ջերմությունը Յ-ից 15—17⁰ բարձր չպետք է լինի: Վերոհիշյալից ցածր խոնավությունն առաջ կբերի ծխախոտի գերչորացում, իսկ բարձրացումը՝ բորբոս: Յնթե

Չերմուխյանը 17⁰-ից ավելի բարձր լինի, ծխախոտը կսկսի ֆերմենտացիայի յենթարկվել այդ պրոցեսի համար միանգամայն անհամապատասխան շնչում:

Գործիքների ցուցումների համաձայն, պետք է կարգավորել թե Չերմաստիճանը և թե խոնավությունը, կատարելով շենքի ողափոխություն՝ լուսամուտները և դռները բաց թողնելու կամ վենտիլացիոն սարքավորման միջոցով:

ՉՖԵՐՄԵՆՏԱՑՎԱԾ ԾԽԱԽՈՏԻ ՓՈՍԼԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Չֆերմենտացված ծխախոտը կոտնտեսության կամ խորհանտեսության արտադրության վայրից սովորաբար փոխադրվում է մթերակայան, իսկ այնտեղից ել՝ ֆերմենտացիոն գործարան: Ծխախոտը մինչև մթերակայան սայլերով կամ ավտոներով և փոխադրվում, վորոշ տեղեր ել՝ գրաստներով, իսկ մթերակայաններից ել ֆերմեդործարան՝ յերկաթգծով կամ ավտոտրանսպորտով: Ծխախոտ փոխադրելու գործը պետք է աշխատել ավարտել մինչև յեղանակների տաքանալը: Դարնան վերջերին և ամռան ամիսներին փոխադրություններ չպիտի կատարել, վորովհետև այդ ժամանակ ծխախոտի մեջ ընական ֆերմենտացիայի սկսվում է հակերի տեղաշարժն ու նրանց վրա վորևե ճնշում (վոր անխուսափելի յե փոխադրության ժամանակ) կարող է ծխախոտը փչացնել՝ հակի մեջ յեղած խոնավության և բորբոսներ առաջանալու հետևանքով:

Ծխախոտի հակերը սայլի կամ ավտոմեքենաների վրա այնպես պետք է դարսել, վոր իբար շատ չսեղմեն: Դրա համար հակերը դարսվում են կոթերը դեպի վեր, յերեփից—չորս շարք: Նախքան բարձելը, հակերի կապանները պետք է լավ ձգվեն: Անձրևներից, ձյունից և ընդհանրապես անբարենպաստ յեղանակներից պաշտպանելու համար ծխախոտը տեղափոխելիս պետք է ծածկել բրեզենտով կամ այլ հարմար կտորով: Ծանապարհին հակերը տեղից չշարժվելու կամ չթրջվելու համար, սայլը կամ ավտոն բարձելիս յերկար ու հաստ թոկով խաչաձև և հորիզոնական դիրքով ամուր պետք է կապել ավտոմեքենայի կամ սայլի կողմից:

Ծխախոտը յերկաթուղով փոխադրելիս հակերը վազոնների մեջ պետք է դարսել իբար վրա, վորքան կարելի յե խիտ՝ ճանապարհին տեղից չշարժվելու համար: Վազոնների մեջ հակեր

դարսելու ամենալավ ձևը «յեռյակներով» դարսելն է: Սակայն վագոնը լրիվ դարսելու համար թուլլատրվում է հակերը փայտերի վրա դնել յերկու շարք, մինչև անգամ վերևից յերրորդ շարքը պառկած (платаж) վիճակում: Վագոնի մեջ ծխախոտն ամբողջ ճանապարհին պետք է լավ ծածկել:

Զֆերմենտացված ծխախոտը ջրային ճանապարհներով փոխադրելու դեպքում, վորպես կանոն, տեղափոխելը 2—3 օրից ավելի չպիտի տևի, յիթե նալի ապրանքային մասը համապատասխան կարգով չի սարքավորված զրա համար: Բոլոր տեսակի փոխադրությունների ժամանակ ծխախոտի մոտ նալթ, ներկի և հոտ ունեցող այլ նյութեր չպետք է լինեն, վորովհետև ծխախոտը կողմնակի հոտը հեշտությամբ է կլանում:

ԾԽԱԽՈՏ ՎԵՐԱՄՇՆԱԿԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Ինչպես ասված է, ծխախոտի հումքը համապատասխան վորակով ապահովելու դործում ամենապատասխանատու աշխատանքներից մեկը համարվում է ծխախոտի վերամշակումը: Վատ, անբավարար և վոչ ստանդարտով մշակման կանոններին համապատասխան ուշադրություն չդարձնելու դեպքում, դաշտից ստացված վորակով ծխախոտը կարող է վիչանալ կամ վորակը վատացնել, վորի հետևանքով իջնում է նրա արժեքը: Այս տեսակետից մեծ նշանակություն ունի ծխախոտ վերամշակելու աշտանքները ճիշտ կազմակերպելն ու ժամանակին մթերման կայսին հանձնելը:

Քսանհինգ հեկտար ծխախոտի բերք տեսակավորելու և մշակելու համար խորհուրդ կտանք աշխատողների խմբակ ունենալ հետևյալ կազմով.

1. փնջավորող	18 հոգի
2. տեսակավորող	6 »
2. շարան մատակարարող և փնջիքը կույտ դնող	2 »
4. հակավորող	5 »
5. ավագ տեսակավորող	1 »
Ընդամենը	32 հոգի

Այսպիսի կազմ ունեցող տեսակավորողների ու հակավորողների խմբակն օրական կարող է 300—600 շարան ծխախոտ վերամշակել (շարանի յերկարությունը հաշված 3¹/₂ մետր):

Նայած տնտեսութեան վիճակին, խմբակի կազմը կարելի չե համապատասխան չափով ավելացնել կամ պակսեցնելը

Յուրաքանչյուր խմբակուժ վորպես խմբակավար ե հանդիսանում ավագ տեսակավորողը: Միաժամանակ անհրաժեշտ ե ուժեղացնել ավագ տեսակավորողի պատասխանատվութիւնը՝ իրեն աշխատողներէ նկատմամբ կիրառելով հետեյալ միջոցառումները:

Ավագ տեսակավորողին պետք ե պարտավորեցնել, վոր տեսակավորված փնջերը կույտ դնող աշխատակցին փնջավորված ծխախոտ հանձնելիս վրան պիտակ փակցվի, ցույց տալով տրվյալ ծխախոտը տեսակավորողի անուն-ազգանունը: Կույտերում 7—10 որ պահելուց հետո սկսվում ե ծխախոտի հիմնական հակավորումը, վորի ընթացքում տվյալ պիտակով կարելի կլինի հայտարերել անորակ տեսակավորում կատարողին:

Նույնը պետք ե կիրառել հակավորողի նկատմամբ, վորի ազգանունը նշան կվում ե հակի վորեւ փայտի վրա:

Մթերակայանն, ըին ծխախոտ հանձնելը տեղի պետք ե ունենա տվյալ ծխախոտը մշակող բրիգադի խմբակավարի միջոցով՝ կոլտնտեսութեան վարչութեան նախագահի կամ անդամի մասնակցութեամբ:

Ծխախոտը մթերակայան փոխադրելիս հափշտակումներն ու կորուստները կանխելու նպատակով, փոխադրվող ծխախոտի համար կոլտնտեսութեանն ապրանքային որգեր պետք ե գրի յերեք որինակ, ցույց տալով.

ա) հակերի թիվը, բ) ծխախոտի տեսակները ե գ) քաշը: Վերջին տվյալները մթերման կայանում ստուգվում են:

Կոլտնտեսութեաններում թե առանձին բրիգադներին ու խմբակներին ե թե խմբակի առանձին կոլտնտեսականներին միջև, վորպես վորակական ե քանակական առաջադրութիւնների կատարման ե գերակատարման ազդակ, լայն չափով պետք ե ծավալի ստախանովական շարժումն ու կիրառվեն սոցիալիստական աշխատանքների նոր մեթոդները, այն ե՝ հարվածայնութիւնն ու սոցմրցումը:

Աշխատանքը պետք ե կազմակերպել անհատական գործարքային սկզբունքով ե աշխատանքի հաշվառում կատարել համաձայն մշակած ծխախոտի շարանի, փնջերի ե հակելի թվի: Աշխատանքի կազմակերպման խնդիրը սերտ կապ ունի աշխատանքի արտադրանքի նորմաների ե աշխատանքն աշխորերով գնա-

հատելու հետ: Վերոհիշյալ աշխատանքները մանրամասն պետք է ուսումնասիրել և նորմավորել, հիմք ընդունելով կոլտնտեսութեան աշխատանքի պայմաններն ու հարմարութեանները, և առանձին աշխատանքների ռեալ նորմաներ սահմանել, հիմք ընդունելով լավագույն աշխատողների արտադրանքը:

Ծխախոտ վերամշակելու աշխատանքների դնահատուցն աշխորներով վորոշելիս հիմք պետք է ընդունել այս կամ այն աշխատանքը, դժվարութեանն ու կվալիֆիկացիան. բարձր դնահատելով պետք է քաջալերել ավելի կարևոր և պատասխանատու աշխատանքները (տեսակավորումը, հակավորումը): Այս հանգամանքն ազդակ կհանդիտանա կոլտնտեսականին, վոր նա ձգտի իր վորակը բարձրացնել և բարեխիղճ աշխատել, պահպանելով աշխատանքի վորակի բարձր ցուցանիշները:

Ծխախոտ վերամշակելու համար, վորպես որիենտիր նորմաներ, հանձնարարվում են.

Աշխատանքի բնույթը		Գ ա շ ը		
		Խաշխամ	Անաջ	Առաջից վերիի քաղերը
1	Փնջավորող	28 թեկ	24 թեկ	18 թեկ
2	Տեսակավորող	84 »	72 »	54 »
3	Շարան մատակարարող և փընջերը կույտ դնող	500 0/0	500 »	500 »
4	Հակավորող —(1—3 տեսակի) .	2,5—3 հակ	1—2 հ.	1—2 հակ
5	» —(4—5 ») .	3-ից մինչև	5 հակ	
6	Ավազ տեսակավորող	500 շար.	500 շար.	500 շար.

Այս նորմաները մոտավոր են և տեղում հողբաժինները, ՄՏԿ-ներն ու կոլտնտեսութեանները, յիլակետ ունենալով տեղական պայմաններն ու հիմք ընդունելով առաջավոր կոլտնտեսականների փորձը, պետք է ճշգրտեն:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008680

475

ԳՐԱԸ 80 ԿԱԳ.

A ^{II} 18559



**Սոսլոսրճյայնայ
ոբրաճոտկա
տաբակա**

Դոսլաճոտ, Երևան, 1937 Կ